

ԾԱՆՈՒՑՈՒՄ CALFRESH ՍՍԱՑՈՂՆԵՐԻՆ ԿԱՐԵՎՈՐ Է՝ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ

Սկսած 2014 թ. հուլիսի 1-ից՝ Նահանգային օրենքը փոխվել է: Որոշ կենցաղներ կարող են ստանալ Կոմունալ ծառայությունների Նահանգային օժանդակության լրավճարի (State Utility Assistance Subsidy, SUAS) նպաստը: Այս նպաստը տրվում է ՄԻԱՅՆ մեկ անգամ վկայագրման ժամանակաշրջանում: Այն ՄԻԱՅՆ որոշակի CalFresh կենցաղների համար: Այս նպաստը ստացող կենցաղները նրանք են, որոնք՝

- չունեն տան վարձակալության/վճարման վարձից առանձնացված կոմունալ ծառայությունների հաշիվներ,
- արդեն չեն ստանում իրենց կենցաղի չափսի համար CalFresh առավելագույն նպաստը,
- չեն ստանում ապաստանի առավելագույն հանումը, կամ
- արդեն չեն ստանում ավելացված նպաստ Անօթևանների ապաստանի հանումների պատճառով:

Ձեր կենցաղն իրավասու է SUAS-ի համար: Տարեկան \$20.01 կորվի ձեր կանխիկ Էլեկտրոնային նպաստի գործարկի (Electronic Benefit Transaction, EBT) հաշվի վրա: SUAS նպաստը (\$20.01) կարող է օգտագործվել սննդի կամ կանխիկ դրամով գնումների համար: Եթե դուք ներկայումս չունեք կանխիկ EBT հաշիվ, ապա ձեզ համար բացել են այդպիսի հաշիվ: Այս վճարումը թույլ է տալիս վարչաշրջանին օգտագործել կոմունալ ծառայությունների ամենաբարձր հանումը (Կոմունալ ծառայությունների ստանդարտ հատուցումը/Standard Utility Allowance, SUA) սննդի նպաստների համար: Ձեր հաջորդ վկայագրման ժամանակ, եթե դուք այլևս իրավասու կենցաղ չլինեք (ըստ վերոնշյալ տեղեկության), դուք չեք ստանա \$20.01 SUAS նպաստը: Եթե ցանկանում եք ավելին իմանալ, զանգահարեք ձեր աշխատողին:



Քեռներ այս խորհուրդներին տանը Էներգիա խնայելու համար.

- Եղանակից պաշտպանող պատուհանների և դռների շերտեր:
- Ձեր ջրի տաքացուցչի շուրջ ջերմամեկուսացում փաթաթեք կամ ջերմամեկուսացնող ծածկոց տեղադրեք:
- Դրեք ջրի տաքացուցչի ջերմաչափը 140 աստիճանի վրա կամ «նորմալ»-ի վրա, եթե դուք սպասեք լվանալու մեքենա ունեք: Եթե ոչ, ապա դրեք այն 120 աստիճանի վրա կամ «ցածր»-ի վրա: Ստուգեք ձեր սպասք լվանալու մեքենան՝ պարզելու համար, եթե կարող եք 120 աստիճանի ջուր օգտագործել:
- Փոխարինեք շիկացման լամպերը ֆլուորեսցենտային լամպերով՝ նրանք օգտագործում են 75% պակաս Էներգիա ու 10 անգամ ավելի երկար են աշխատում:
- Կանոնավոր կերպով մաքրեք կամ փոխարինեք ձեր ջեռուցչի և օդափոխիչի ֆիլտրերը:
- Դրեք ձեր ջեռուցչի ջերմաստիճանը 68 աստիճանի վրա կամ ավելի ցածր, իսկ օդափոխիչի ջերմաստիճանը 78 աստիճանի վրա կամ ավելի բարձր, եթե ձեր առողջությունը թույլ է տալիս: 3-ից 5 տոկոս ավել Էներգիայի ծախսվում ամեն աստիճանի համար, երբ ջեռուցիչը դրված է 68 աստիճանից բարձր, և ամեն աստիճանի համար, երբ օդափոխիչը դրված է 78 աստիճանից ցածր:
- Վերանորոգեք ծակված ջրմուղներն ու կաթացող ջրի ծորակները:
- Փակեք վարագույրները հարավ և/կամ արևմուտք Նայող պատուհանների վրա՝ ամառային լույսը խոչընդոտելու համար: Ձմռանը՝ արևոտ օրերին, բացեք վարագույրները՝ սենյակները տաքացնելու համար:
- Դալեցրեք սառնեցված սնունդը սառնարանում, Նախքան այն եփելը:
- Եփելիս կամ թխելիս օգտագործեք վառարանի լույսն արդյունքը տեսնելու համար՝ վառարանի դուռը բացելու փոխարեն:
- Սառնարանի ջերմաստիճանը դրեք 36°-ից 39° F վրա, իսկ սառցարանինը՝ 0°-ից 5° F վրա:
- Անջատեք լույսը, հեռուստացույցն ու այլ սարքերը, որոնք չեք օգտագործում:
- Դոսանքից անջատեք համակարգիչը և այլ սարքերը, նույնիսկ երբ դրանք անջատած են: